Եղիշե Չարենց

Պրինցեսա մահ

Նվարդին ու Գոհարին
Սպիտակ վարդեր կան շրթերի վրա քո,
Աչքերիդ լճի մեջ մոռացման թերթեր:
Հավիտյան հանգել է աչքերիդ կրակը
Ու բացվել են տեղը սպիտակ վարդեր:

Դու խաղաղ նիրհել ես, հավիտյան լռել ես
Եվ այնպե՛ս է քաղցր լռությունը քո,
Որ մի պահ մարել եմ առաջվա հրերս
Ու խմում եմ նիրհդ՝ լուսավոր ու գոհ:

Ախ, կարծես թե սիրտս քեզ դարե՛ր սիրել է
Ու գտել է լույսդ դագաղում հիմա.
Քո գունատ աչքերը, քո մաքո՛ւր աչքերը
Իմ հոգին գերել են, օ, պրինցեսա Մահ...

Եվ ահա թեքվել եմ ու դողդոջ շրթերս
Համբուրում են կարծր քո ճակատը սառ
Համբույրով տալիս եմ կարոտի վարդերս՝
Քո լուսե հուշի հետ մոռացմա՛նը տար...

1921